



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

606

611  

---

6-79

2010

12002

~~611~~  
~~35-63~~

611  
6-79

ՏՆԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

4

ՀԱՅ ԲԺՇԿԱՐԱՆՔ  
ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ ՊՈՆՏԱՑԻՈՑ

ԳՆՆՈՒԹԻՒՆ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆԻ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄՐՐՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1901

47 104

3

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՀԱՅ ԲՈՇԿԱՐԱՆՔ

# ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ ՊՈՆՏԱՑԻՈՅ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆԻ

0150 - 26/2



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՎԱԶԱՐՈՒ

1904



## ՀԱՅ ԲԺՇԿԱՐԱՆԻՔ

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

**Ն**ԱՆՆԵԱՑ մատենագրութեան մէջ բնական զիտութեանց վերաբերեալ մատենանց հազուադիւտ են. և մեր մատենագիրք աւելի պատմական և եկեղեցական ուսմանց պարագելով, այժմ զգալի է բնագիտականին վերաբերեալ զրոյց պակասութիւնը. բայց գուցէ (թէեւ շատ տարակուսական է) նախնիք զրաժ, կամ թարգմանած ըլլան նոյն մասնաճիւղին յատուկ զրբեր, որոնք ժամանակին ծախիչ և կամ բնական կամ անբնական աւերիչ ազգակներու ենթարկուելով, արդ մեր մատենագրութեան մէջ զիտութեանց և զիտական բառերու մեծ պակաս մը կը մնայ:

Ուսումնասիրելի բժշկարանս կը կրէ «Մար-

դակագնաշրիշե» անունն: Միջադիր, նօտրա-  
զիր, միասին մատեան մ'է, կազմուած .  
ծածրն ստուարաթղթէ՝ կաշեպատ: Ամբողջ  
զիրքը բաղկացած է 113 թղթերէ (ունի 6  
դատարկ թղթեր) զիրն մարուր և ընթեանլի .  
նիւթոց վերնագիրն կարմիր տառերով: Չունի  
զարդագրեր: Էջերու թուերն անկարգ են և  
շատ էջ անթիւ: Նոյնպէս կազմն անկարգ  
է, գրքի առաջին էջը կը սկսի 188 էջէն, իսկ  
բուն մարդակազմութիւնը 1 թուակիր էջէն:

Գրքիս առաջին նիւթն է համառօտ նկա-  
րագրութիւն անուանի և պիտանի ականց, կը  
կրէ հետեւեալ վերնագիրն «Յաղագս որպի-  
տաշրեան ականց պատուականաց, բնոշրեանց  
կերպից, և գոյնոց և անոշանց նոցիւն»:

Երկրորդ մասը ընդարձակօրէն կը խօսի  
մարդակազմութեան և առողջաբանութեան  
վրայ, իսկ երրորդ մասը ընդհանրապէս հա-  
մառօտ սեղեկութիւններ են զեղօրէից:

Գրչաքիր մատենիս առաջին էջին մէջ կը  
գտնենք հետեւեալ յիշատակարանն. «Օրի-  
նակեալ ձեռամբ Մանուկէ պոնտացոյ, եւ  
որդի բժիշկ Սահակեան եւ ի թուին Հայոց  
ՌԲԶին (?)<sup>1</sup>, եղեւ ի մայրաքաղաքն Քա-

1. Հաւանական է որ լինի ՌԲԶԶ = 1757:

Քա» : Յիշատակարանէս կը հասկնանք որ  
այդ օրինակողն է Տրապիզոնցի Հ. Մի-  
նաս Վ. Բժշկեանի հայրն<sup>1</sup>:

Կ'ուզենք քննել թէ բժշկարանս զուտ օ-  
րինակութիւն է, թէ հաւաքումն. և եթէ օրի-  
նակութիւն մ'է, ուստի՞ հաւանական է որ  
օրինակուած լինի: Պոնտացին Մանուկ միայն  
կը գրէ թէ օրինակած է, և բնագիրն չի յի-  
շատակեր: Կրնայ առարկուիլ թէ արդեօք  
օրինակել բանն նիւթապէս ընդօրինակել  
պէտք ենք հասկնալ, թէ քաղուածոյ գործ  
մը. վասն զի ինչպէս կը տեսնենք Միսիթար  
Հեքացոյ Չերմանց զիրքն, որ նոյն ինքն  
Միսիթար իւր յառաջաբանին մէջ ոչ հեղի-  
նակութիւն, այլ թարգմանութիւն կ'անուանէ,  
կը գրէ «Կամեցայ, ըստ իմոյ կարողութեան  
սանել զգիրքս զայս՝ միայն վասն երեք ազգ  
Չերմանցն համառօտ՝ նախագիտութեամբն և  
ստածմամբն: Չբովանդակն՝ որ վասն արուես-

1. Բժշկին Մանուկ կը հանգչի Տրապիզոնի  
Հայ Լուսաւորչական Աստուածածին եկեղեցւոյ  
աւագ խորանին կռնակը. վրան կանգնած են  
կհեայ զեղեցիկ զերեղման մը՝ արձանագրու-  
թեամբ որ կը վերջանայ, «Բժիշկ, բժշկեմ զանձն  
քո» խօսքով:

տի բժշկութեանս՝ թողի, և զերեք արգ ջերմանցս միայն հաւաքեցի, և քարգնանեցի ի հայ բաւ»։ Հերացի բժիշկն քարգնանեցի կը զրէ, բայց բանիրուն բանասէր Հ. Ղ. Վ. Յովնանեան հետեւեալ մեկնութիւնը կու տայ. «Մեզի այնպէս կ'երեւայ որ Մխիթար Կաւեցայ... առնել Քիրքս, ... հաւաքեցի և քարգնանեցի» ըսելով կը յայտնէ թէ ի ձեռին ունենալով այլեայլ օտար լեզուաւ գրքեր, անոնցմէ քաղած, կարգի գրած, իւր անձնական գիտողութիւնքն ու փորձառութիւնքն յաւելցուցած... նոր գիրք մի յօրինած է հայերէն լեզուաւ : Եւ որովհետեւ ի ձեռին ունեցած գրքերն օտար լեզուաւ էին, անոնցմէ քաղած կամ հաւաքած մատուցն ի հարկէ թարգմանելու էր<sup>1</sup>»:

Մենք յետագայ ուսումնասիրութեամբ, պիտի ջանանք ցոյց տալու թէ արդեօք՝ Մանուկ բժիշկի այս գործն զուտ ընդօրինակութիւն է թէ քաղուածոյ գործ մը, շատ հաւանական է որ յիշեալ Մանուկ՝ ինքն եւս բժիշկ

1. Հմմտ. էջ 72. Հետագօտութիւնք նախնեաց ուսմիօրէնի վրայ. Հ. Ղ. Վ. Յովնանեան Վիեննա 1897: Հեղինակն իւր վերոյիշեալ մեկնութիւնը ապացուցանելու համար համազօծ փաստեր ունի:

ըլլալով, այս գործն իրեն ծանօթ բժշկարաններէն հաւաքած, համառօտած և ինքն եւս մի քանի բաներ աւելցուցած է:

Մեր գրչադրաց մատենապարանին մէջ գտնուած տասնեակ բժշկարաններն ասոր հետ բաղդատելով, բոլորովին յար և նման մը չենք գտած, նոյն պէս նաեւ Վիեննայի Մխիթարեան պատուական Հարց գրչադրաց ցուցակին մէջ չենք գտներ ասոր նման գործի մը յիշատակութիւնը. բայց ի աստի, Մանուկ Բժշկեանի այս գրքին բովանդակութիւնն բաղդատելով Ամիրտուլամայ<sup>1</sup> բժշկարանին

1. Հայ բժշկաց պարագլխոյն կենսագրութիւնը աւելորդ կը համարինք աստ երկրորդելու, քանի որ շատ անգամ ի Բագնալիկայի և այլուր խօսուած է անոր մասին. բայց կարելոր կը դատենք համառօտ ծանօթութիւն մը տալ իւր բժշկարանին այն օրինակին վրայ, որուն հետ պիտի բաղդատենք վերոյիշեալ ձեռագիրն: Բաղդացած է 480 մեծագիր երկսիւն էջերէ. հաստ և ողորկ է թուղթը, գրութիւնը նօսրգիր տեղ տեղ շատ մանր գրուած: Մեծ մասը նոյնագիր է. բայց տեղ տեղ տարբեր գրութիւններ ալ կ'երեւին: Էջ 15 գրուած կը գտնենք հետեւեալ յիշատակարանը.

«Յայսպէս գիրքն շինեցի, ես անպիտան և անարժան նուաստ ծառայս աստուծոյ ամիր-



ամենէն ընտիր օրինակին հետ, կը տեսնենք որ Մանուկ իր մարդակազմութեան մեծ մասը այն գործէն բաղած է:

աօլլաթ բժիշկն ամասիացիին, ի մայրաքաղաքն ի ֆիլիպպայ ի թուականութեանս հայոց ԶԺԵ (1466) ամին. և ամսոյն դեկտեմբերի ին, ին. օրն հինգ-շաբթի. և ծնունդն էր. ք. փրկչին, այլազրեաց. Եւ այնչափ որ իմ ուժն էր նա ջանացի զայս կատարել. Եւ ով որ կարգայ կամ օրինակէ, թէ եկեղեցական է թէ բժիշկ է մի խափանէք: Եւ ով որ ջանայ որ կարէ մի թուլթ իսմանէ կամ գողնայ բանադրած է: ՅԺԸ. հայրապետացն և ջանացէք որ զբանադրանքն չի ընդունիք. և զինչ որ գրած է զայն արարէք»:

Յառաջաբանին վերջը՝ (էջ 17) գրած է. «Թարգմանեցաւ պատուական բժշկարանս ի թուականին հայոց. ԶԺԸ. (1469) ամին. դեկտեմբերի. ԻՅ. որ ծնունդ էր փրկչին, այլազրեաց հաշուովն, ի կաթուղիկոսութեան տեառն ըստազիսին, և եպիսկոպոսութեան տեառն յովակիմին (է պատրիարքն Կ. Պոլսոյ) որ կարգայք և օրինակէք, թողութիւն մեղաց խնդրեցէք ի քրիստոսէ, թարգմանողի գրոցս ամիրաօլլաթին, որ աստուած զձեզ յիշէ. ի միւս անգամ զալուստն. ամէն»: Բժշկարանս Կ. Պոլսէն բերած է Հ. Ասկաս Ինճիճեան 1790 ամիք. հոկտ. 8: Մածքն փայտ է և շագանակագոյն կաշուով պատած:

Ամիրաօլլաթայ բժշկարանին մէջ (յէջ 25) կը կարդանք երկար ներածութիւն մը, նոյնը նաեւ Մանուկի բժշկարանն ունի և կը սխի առաջին էջէն Առաջաբանն շրջէ վերնագրով: Ամիրաօլլաթ իր ներածութիւնը բաժնած է վեց պարբերութեանց<sup>1</sup>, իսկ Մանուկ՝ այն ամէնն մի երկար պարբերութեան մէջ յիշած է: Մանուկ՝ «Առաջաբանով» կ'իմացընէ թէ բժշկութեան ուսումը պէտք է որ ամէն ոք գիտնայ իբրեւ աստուածային պատուէր մը, և անոր համար կը յիշէ հետեւեալ դէպքն. «Եւ գրած է ի հին կտակարանին թէ, Մովսէս հիւանդացաւ և եկին նորայ սիրելիքն թէ զեղ արա բեզ, և նա ասաց թէ ճով ետինձ զոյս հիւանդութիւնս, նա զեզն, և ստածումն ինքն տա, և ձայն եզեւ ի վերուտ, թէ զեզ արա՛ բեզ, զի զեզն այլ ես եմ ստեղծեր, և ստածումն այլ իմ հրամանաւն է, և զեզ արա՛ բեզ, և ես տամ զառողջութիւն»: Բժիշկին Մանուկ բժշկութեան ծագումը ի Յունաց կ'ընդունի, որոնցմէ անցեր է Հնդկաց և յետոյ Հռոմոց, բայց ամենէն աւելի կը յարգէ յոյն բժիշկները: Այս յառաջաբանը զուտ օրինակութիւն մ'է Ամիր-

1. Հմտ. Ամիրաօլլաթ, էջ 25:

տորվածայ յառաջաբանին և տարբերութիւնք  
ամենաչնչին են: Յառաջաբանին վերջը Մա-  
նուկ՝ խոշոր վերնագրերով բուն բժշկական գի-  
տութեան վրայ կը սկսի ճառել, վերնագիր կը  
գնէ. «Վերծանուածն իսկապես բժշկական մա-  
կացոչքեան: Սկսանի»: Եւ կը յիշէ «զւարե,  
և զբաժիւն բժշկոչքեան<sup>1</sup>»: Այս պարբերու-  
թիւնն և նոյնպէս հետեւեալներն «Եւ չարե  
ըստոչոչուսարիւն<sup>2</sup>»: «Դռան որ յիշէ, զմի-  
զաձն և բնոչքիւնն<sup>3</sup>»: Բժիշկին Մանուկ՝  
Ամիրտորվածայ բժշկարանի 25 էջէն մինչեւ  
29 էջ, ընդօրինակած է վերոյիշեալ պար-  
բերութիւնք առանց մի սող յապաւելու: Յե-  
տոյ իր ընդօրինակութիւնք Ամիրտորվածայ  
բժշկարանին կարգին չեն համապատասխա-  
ներ: Մանուկ կը ճառէ մարդակազմութեան  
վրայ և Ամիրտորվածէն կը բազէ մարդու  
գործարանաց և անոնց առողջութեան վերա-  
բերեալ գրութիւնք, բայց իր մարդակազմու-  
թեան պարբերութիւնք Ամիրտորվածայ բժշ-  
կարանին պէս կարգաւորեալ չեն: Յէջ 15,  
16, պարբերութիւնք հաւատարմութեամբ

1. Հմմտ. Մանուկ էջ 7. Ամիրտ. էջ 26:

2. Հմմտ. Մեկ. էջ 9. Ամտ. էջ 27:

3. Հմմտ. Մեկ. էջ 11. Ամտ. էջ 28:

ընդօրինակուած են Ամիրտորվածայ բժշկա-  
րանէն<sup>1</sup>: Մանուկ՝ յէջ 18 կը խօսի «Աղէ-  
ճորաներու» ստեղծման վրայ. այս պարբե-  
րութիւնը ըստ Ամիրտորվածայ բժշկարանին  
կիսատ է և անկատար<sup>2</sup>: Առողջաբանական  
պայմաններու մի քանի պարբերութիւնք յէջ  
19, 20, 21, կարգաւ ընդօրինակութիւնք  
են Ամիրտորվածայ բժշկարանին<sup>3</sup>: Այս պար-  
բերութեանց յաջորդ գլխակարգութիւնը որ  
կը սորվեցընէ լուծման դեղ խմելու միջոց-  
ներն, թէև առաջին տասնեակ տողերով  
նման է Ամիրտորվածայ բժշկարանին, բայց  
յետոյ բոլորովին նմանութիւնք կը փոխուին  
(Մ. յէջ 22. Ա. 48): Պարբերութիւնք «Վասն  
ստեղծման մարդոյ» (24)<sup>4</sup>, «Վասն ծննդեան  
մանկանն թէ որպէս ե» (29)<sup>5</sup>, «Եւ մար-  
դակազմոչքեան առաջն զոսկերքն ե» (30)<sup>6</sup>,  
«Կերպ ստեղծման գլխոյ և յղեղին» (33)<sup>7</sup>,

1. Հմմտ. Ամտ. էջ 37:

2. Նոյն էջ 37:

3. Նոյն էջ 47:

4. Հմմտ. Ամիրտ. էջ 50:

5. Նոյն էջ 52:

6. Նոյն էջ 55:

7. Նոյն էջ 54:

«Վասն ստեղծման փայծղան» (35)<sup>1</sup>, «Վասն ստեղծման բոքի» (36)<sup>2</sup>, «Վասն ըստեղծման լեղոյն» (37)<sup>3</sup>, «Վասն ստեղծման սրբտի» (39)<sup>4</sup>, «Կերպ ստեղծման լերի» (40)<sup>5</sup>, «Վասն ստեղծման աղեցն» (41)<sup>6</sup>, «Վասն ստեղծման հարարտի» (42)<sup>7</sup>, «Կերպ վասն կազմուքիս աչացն» (43)<sup>8</sup>, և նոյնպէս անտի սկսեալ՝ այսինքն 43 ԼՂէն մինչեւ 66 ԼՂ, մարդակազմական և առողջաբանական տեղեկութիւնք պարզապէս Ամիրտողլաթէն ընդօրինակուած են<sup>9</sup>: Պարբերութիւնն «Վասն ի բաղանիս շուստեղոյ»՝ կիսկատար ընդօրինակութիւն է Ամիրտողլաթայ գործէն<sup>10</sup>: Ասոր յաջորդ պարբերու-

1. Նոյն էջ 55:

2. Նոյն էջ 56:

3. Նոյն էջ 56:

4. Նոյն էջ 55:

5. Նոյն էջ 55:

6. Նոյն էջ 57: Մանուկ այս պարբերութիւնը Ամիրտողլաթէն ընդօրինակուած է համառօտելով:

7. Նոյն էջ 58:

8. Նոյն էջ 58:

9. Նոյն էջ 58-46:

10. Նոյն էջ 46:

թիւնք յէջ 69 մինչեւ 113 էջ կարգաւ Ամիրտողլաթայ երկէն (էջ 49-68) ընդօրինակուած է և մի քանի պարբերութեանց մէջ աննշան տարբերութիւնք կը գտնուին:

Մինչեւ ցարգ ի մէջ բերած պարբերութիւնք ըսինք որ ակն յայտնի ընդօրինակութիւնք են Ամիրտողլաթայ յիշեալ բժշկարանէն: Մանկան բժշկարանին միւս մասերն ընաւ չեն համապատասխաներ Ամիրտողլաթայ հեղինակութեան հետ: Ուրիշ յօդուածով կը խօսինք նիւթոց վրայ և ընդհանուր բժշկարանին մէջ գտնուած ուսումնական բառերուն և անոնց ամանց մասին. իսկ ներկայիս լաւ կը համարինք ամիօփ տեղեկութիւն մի տալ նոյն մարդակազմութեան այն մասանց վրայ, որոնց վրայ կարելի է հրապարակաւ խօսիլ:

Առաջարանուշքեկն վերջը կը խօսի բժշկի պէտք եղած զիտութեան վրայ. կը պահանջէ որ բժիշկ մը օգտակար ըլլալու համար պէտք է որ իր ուսման շատ լաւ տեղեկ և հմուտ ըլլայ: — «Դուան որ յիշէ, զմիզածն և բնութիւնն» վերնագրով պարբերութեան մէջ ընդհանուր կը խօսի արեան և մաղձի զանազան վիճակաց վրայ: Կը գրէ.

«... և զիտացիբ որ արեան բնութիւնն

տաք է և գէճ. և իւր ընծայման տեղն լերդն է, և ունի դօթն. և սաֆրային բնութիւնն տաք է, և չոր ի կրակին բնութիւնն է. և իւր ընծայման տեղն լեզին է. և պաղղամին բնութիւնն հով և գէճ է, և ունի զջրին բնութիւնն, և իւր տեղն թոքն է. և սաւտաին բնութիւնն հով և չոր է, և ունի զհողին բնութիւնն և իւր բնական տեղիքն փայծեղն է...»:

Յէջ 16 մանրամասն կը նկարագրէ ստամոքսի կազմութիւնը անոր ձեւն և մէջը կը գնէ չորս տեսակ ուժ, որոնք առանձին գործ ունին, առաջինը ըստ բժշկապետաց կոչի «դռաքի ձագիպա, որ է քարշողութեան յուժն». երկրորդն «դռւարի մաւիքա, որ է բոնողութեան յուժն». երրորդն՝ «դռւարի հագիմա, որ է եփողութեան յոյժն», չորրորդն, «դռւարի տաֆեա, որ է այն յուժն որ արտաքս վաթէ դաւելուածն ի ստամոքէն»: — Աշխատիլը, շարժումն շատ օգտակար կը համարի, «և աշխատիլն, ի կերակրէն առաջ կու պիտի որ զստամոքն յուժովցնէ, և զկերակուրն հալէ, և զբնութիւնն կակղացընէ, և զլղերն ամրացնէ» (էջ 20): — Յէջ 24 «Վասն ստեղծման մարդոյ» վերնագրով կը խօսի ծննդեան վրայ, և այդ պարբերու-

թիւնը աւելի բնախօսական ճառ մ'է, և շատ մանրամասնութեանց մէջ մտած է: — Ոսկերաց կազմութեան (յէջ 30) վրայ հետաքրքրական տեղեկութիւն կու տայ. «Գիտացիր որ սակերքն մարդոյ սին է արարեր արարիչն Աստուած, և մարդոյն հիմն, առանց սկոբի չի մնար և չի կարնար կանգներ ի վերայ ոտիցն»: — Գլխոյ և ուղեղի վրայ խօսելով, սիրաւ մարդուս կազմութեան թագաւորն կ'անուանէ, ուղեղը անոր համախոհը, լերդն տանուտէր: Տակաւին ծանօթ չէ թէ ինչ է փայծեղան պաշտօնը, բայց այս բժշկարանի մէջ կը գտնենք (էջ 35) հետագայ բացատրութիւնը «գիտացիր որ փայծղան բնութիւնն հով է և չոր... Ինքն է տուն սաւտային... Եւ օդնութիւն փայծղան այն է որ զստեան մրուրն ի ինքն քաշէ... և իւր կերակուրն է արեան մրուր»: Առանձին պարբերութեամբ կը խօսի թոքի, լեղւոյ, սրտի, լերդի, աղեաց, և աչաց վրայ: Զուարճալի է ականջի նկարագրութիւնը, «Գիտացիր (էջ 47) որ ձեւ ականջացն այսպէս է, որ և Արարիչն Աստուած, այնոր համար է ստեղծեր, որ լսէ ձայնն զամենայն և հասկանայ շուտով, և ինքն որպէս նաւի հլքան է, և ծակն ականջացն, ոլոր ոլոր է, գէտ

կեղիկն: և Աստուած իւր ողորմութեամբն այնոր զայն հանցն է արեր, որ կամ վատ հով կամ հով ինքն չի մտնէ, և զականջաց ջուրն այնոր համար լեղի արար Աստուած, որ սկի անասուն և սողուն ի ինքն չի մտնու, և այն լեղի ջուրն սպաննող է և ամէն ժամն կու սպանէ»: Եոյն էջին մէջ քթի վրայ խօսելով, քիթը երեսին շնորհքն կ'ընդունի, «Եւ առանց քթին երեսն շնորհք չունի»: Յէջ 56-59 առողջաբանական մի քանի կանոններ կու տայ. յետոյ կը խօսի պտուղ ու տելու, ջուր և զինի խմելու համար, կը գրէ. «Ասէ Արիստոտելն, և մեծ իմաստունն, թէ ես զգինին բնաւ չի խմեցի և չը հաւանեցա, և ես զայն իրքն չեմ խմել, որ զխելքս կսրցնէ»: Քնոյ և արթնութեան վրայ խօսելով կը յայտնէ հետեւեալ ճիշդ զազափարը. «Եւ բնաւ ամենեին, կու պիտի որ քունն և արթնութիւնն չափաւոր լինի, և թէ շատ արթուն կենա, շատ ցաւեր բերէ առ մարդն»: Յէջ 69 կը խօսի արիւն առնելու վրայ, երբ և ո՞ր անձերէն պէտք է արիւն առնել. կը գրէ «... և թէ այն մարդն որ սրտածած ունենա, կամ սքթա կամ խոշակին բռնուի, այսպիսեացն մի համբերէք, թէ գիշերն թէ ցորեկն, երակ առ շուտով»: Յէջ 71 մաս-

նաւոր պարբերութեամբ մը կը խօսի մարդու իր առողջութիւնը չի կորսնցընելու միջոցներուն վրայ. «Էհանան ասէ թէ պահելն զառողջութիւն այն է, որ զընութեան շարժմունքն, և զըմպելին չափաւոր պիտի այնել»: Յամաքով և նաւով ճանապարհորդաց համար առողջաբանական օգտակար պատուէրներ կու տայ (էջ 73-75): — Յաջորդ յօդուածով կը սարկեցընէ թէ նորածին մանկանց կերակուրն ինչ պէտք է ըլլալ: Յետոյ երակ բննելու վրայ և հիւանդութեանց մի քանի նշաններու վրայ կը խօսի: Յէջ 99 հիւանդին մահուան նշաններու վրայ կը խօսի. ըստ այս բժշկարանի մահուան նշաններ են, «Թէ (հիւանդին) քիթն բարակնա, աչուին խորունկ անկանի, և բերանն ծոխ կամ բաց մնա... Եւ թէ մասններուն ըզունկն կապուտնա, և երակն զէտ մուշի լինի, և թէ ձեռքն և ոտքն սեւ լինի, բայց ուժն ուժով լինի, բարու նշան է: Եւ թէ հիւանդն ի տաք հիւանդութիւնն աչուիբաց մնայ, մահու նշան է: Եւ հիւանդին լեզուն զէտ սիսեռ սեւ իրք մնելանէ, մէկ այլ օրն մեռնի». և այլն: Յէջ 106-109 կը խօսի տարւոյն չորս եղանակաց մէջ մարդու պատահած հիւանդութեանց մասին:

1001  
1001



Հոս կը վերջացընենք մեր համառօտա-  
գրութիւնը. վասն զի մինչեւ այս պարբերու-  
թիւններն կը հասնի Մանուկ բժշկի ընդ-  
օրինակութիւնը: Բժշկարանիս գիտութիւնն  
այնքան արհամարհելի չէ, մի քանի չեսալ  
գրութիւններէ զատ, մեծաւ մասամբ ճշգու-  
թիւն կ'երեւի մարդակազմական և առողջա-  
բանական բացատրութեանց մէջ. լեզուն  
բազմատմամբ ուրիշ վերջնադարեան ռամկո-  
րէն բարբառներու՝ բաւական որոշ է և ընտիր.  
ուսումնական բառերու մեծ մասն արաբերէն  
է, ևւրոպական բառեր ալ գործածած է:

Յետ մարդակազմութեան կը գտնենք հե-  
տեւեալ վերջաբանը.

«Կատարեցաւ՝ մարդակազմութիւն և քրպ-  
տիրն առողջոչքեան: Եւ երակիկն ձանալե(լ)ն,  
և գոգիկն և պօհրաւիկն, և ամեկայկն նշանիկն  
հիւշակոյիկն. կաւօքն Աստուծոյ մերոյ»:

Եւ կը սկսի խօսիլ երակ առնելու օգտա-  
կարութեան վրայ. գրութիւն մը որ ի հին  
բժշկարանս և ի հնումն շատ կը գործածուէր,  
մինչդեռ ըստ արզի բժշկական գիտութեան  
այդ գրեթէ ամենեւին չի գործածուիր: Մա-  
նուկն բժիշկ հնագոյն բժշկարանաց գրու-  
թեամբ արիւն առնելը զեղ կը համարի ա-  
շացաւի, զլխացաւի, փորացաւի, թոքացաւի,

փայծղնացաւի, սրտացաւի, ստամոքացաւի:  
Երկարօրէն կը խօսի այս նիւթիս վրայ (էջ  
113-117): Այս պարբերութեան կը յա-  
ջորդեն մի քանի առողջարանական զեղեր. և  
յետոյ «Բան առ ընթերցողս նրբամիտս»  
վերնագրով տեսակ տեսակ հիւանդութեանց  
զեղերը և դարմանները կը գրէ. այս պար-  
բերութեան մէջ (էջ 122-126) կը գտնուին  
շատ մը ուսումնական և աւելի բուսաբանա-  
կան բնիկ և օտար բառեր: Եւ ըստ բժշկա-  
բանիս, զեղերէն ոմանք փորձելով, այլք ե-  
րազի մէջ տեսնուելով! և յարթութեան փոր-  
ձուելով և մաս մըն ալ կարծեօք կամ են-  
թադրութեամբ գտնուեր են:

Մեր նպատակէն դուրս է հոս մի առ մի  
յիշելու բժշկարանիս զեղերն և առողջաբա-  
նական կանոններն, յորոց ոմանք ներկայ  
գիտութեան առջեւ շատ ծիծաղելի են և ա-  
ռասպելաց շնորհքէն ոչ զուրկ: Միայն իբրեւ  
նմոյշ բժշկարանիս գիտութեան, լեզուին և  
ոճոյն կը յիշենք զեղերէն և դարմաններէն  
մի քանի հատ:

«Ունկն որ խօսի. — Կալ քեզ բողկի  
սերմ. ծեծէ ա (մէկ) էզմալ սոխ ծեծէ. ջուրն  
առ խառնէ միատեղ. և թող ա օր կենա, և լից  
ի մէջ ունկին»:

«Այից կարևորոչրիւն. — Կալ քեզ մուր-  
վէր ծառին սպիտակ ծաղիկը, յերեկոյի ժա-  
մուն լից վրան սակաւ ջուր, առաւօտուն հան  
զջուրն իմպիկօլ, աչից մէջը լուա, որքան  
լուանաս զեն շունի»:

«Շրքռնքն որ ոռաի. — Կալ քեզ ա դրամ  
քրիստալ մինէրալ. կէս գբալ մեղրի հետ  
խառնէ և օժէ»:

«Ատամնացաշի. — Ի՞ր ամաց մարդ մի  
մեծ ատամ մի սկսից հանելու. բայց մեծ  
ցաւ և ուռք ունիր ատամատակերն, դեղն,  
բէհրիպարի թէնթիւր օժելով շատ ջուր եկաւ  
բերանէն առողջացաւ»:

«Հագի կամ կրծոց եիշանդոչրիւն. — Կալ  
քեզսպիտակ հաթէմի ծաղիկ, էպէմ կիօ-  
մէճիի ծաղիկ. հուննապ զուֆա օթի, պալար-  
դարա՝ էգը, էփէ սակաւ շաքար դառնէ, բամէ  
ջուրն առ, տաք տաք խմցուր»:

«Արիւն կտրելու. — Կալ քեզ որքան կամիս  
գորտ. զիր ի վերայ հրոյ թող այրի, մինչեւ  
փոշի լինի, և ապա մաղէ անցուր, և եղէ-  
զամբ փչեա զքիթն»:

«Ատամնացաշի. — Կալ քեզ որքան կա-  
միս թութուն. ջուրով եփէ և քամէ, զար-  
դարա թող անէ, թէ որ պատճառը միայն  
շատ հումօններուն է այս միայն բաւէ»:

«Վերեկին ցաւերոռն. — Սեղի կուտն լաւ  
է. անխոնի իւղն լաւ է զահուէով. սարմա-  
շուինը ջուրով եփէ շաքարով սիրոր շինէ լաւ  
է. պոասան եփէ ջուրն առ՝ մեղրով մաճօն  
արա լաւ է. էսպրի տը ֆիթրիօլ սակաւ վար-  
դէ ջուրով և սակաւ շաքարով սիրոր շինէ ա  
թքալ տուր. էլիքսիր տը փոփիէթը աս ալ  
լաւ է»:

«Խեկի դեղ. — Ա՛ռ հակիթի մը շափ  
մարդու ըզեղ՝ ողջ մեռուցած ըլլայ մարդը.  
և մէկ հօխա տասը տարուան հին զինի խառնէ  
ի միասին լաւ մը՝ տուր որ խմէ ամենը միա-  
ժուտ, մինչեւ ի 24 ժամ բուն լինի յետոյ  
լաւնայ Աստուծով»:

Ընթերցողն անշուշտ կրցաւ գաղափար մը  
կազմել այս մի քանի օրինակներէն (մա-  
նաւանդ վերջին ծիծաղաշարք առասպելա-  
բանութենէն) որ զեղերն ու զարմաններն ըստ  
արդի գիտութեան կրնան մի միայն իբրեւ  
ժողու նիւթ հետաքրքրութիւն շարմել. և զրե-  
թէ ասոր յար և նման են մեր միւս շատ  
մը բժշկարաններ, որոնք մեծաւ մասամբ  
օտար և աւելի հին արաք բժշկներու գոր-  
ծերէն քաղուած կազմուած են:

Դառնանք մեր բուն նպատակին, որ է  
գտնել բառեր որոնք ուսումնական բառարաւ

նաց համար կարելի է օգտակար ըլլան:

Բժշկարանին մէջ հանդիպած ենք զանազան արար, յոյն, լատ. զաղ. իտալ օտար բառերու, որոնք լեզուական կանոնի համեմատ չեն հայացած: Բժշկարանին էջերուն համեմատ և ոչ թէ այբուբենի կարգաւ կը յիշենք հետեւեալ բառերն.

### ԸՍՏՈՒՂՈՒՍԱԹ

ԸստուղուսամԹ. զրուած է նաեւ ՍտուղուսամԹ. այս բառը սլակաս է մեր նշանաւոր և աննշան բառարաններէն. սակայն առանց տարակուսելու կ'ըսենք թէ սա հոմանիշ է մեր ի նախնեաց ունեցած Տարր բառին, որուն մեկնութիւնը նման է այս բառին բուն նշանակութեան. օրինակ.

Մեր քննած բժշկարանին մէջ (յէջ 8-9) կը գտնենք հետեւեալ բացատրութիւններն. «Բայց այժմ՝ յիշեմք զբնութեան ուսումն. և այս որ զ բաժին է, առաջն այն է որ զիտենայ զքո հիմն. որ է Ըստոշոռսարն, այսինքն հոգն, ջուրն, քամին, և կրակն»: Բժշկարանը բառին բուն մեկնութեան մէջ կը գրէ. «Բայց Ըոֆօսն, և Անտարիմախօսն, և Էհանան ասացեր են թէ Ըստոշոռսարն այն է, որ ամենայն գոյացութեանց

հիմն է, և ինքն գործէ ամենայն գործ. Գեղիանոսն՝ և այլք բժշկապետք ասացեր են թէ, Ըստոշոռսարն այն է, որ ամենայն իրք առաջ ենէ իրմէն. և յետոյ կրկին ի ինքն զանա Սստուծով. Բագարասն ասէ, և Մահմատն, և Զարարիային որդին ասացեր են թէ Ըստոշոռսարն հիմն է ամենայն արարածոց. ինքն կերակն է և հոգն է, ջուրն է և հոգմն է. և ամենայն իրք ի զոցին խառնուելուն կու գոյանա»:

Այժմ՝ յիշելով նաեւ Տարր բառին մեկնութիւններն զորս մեր նախնեաց զրոյց մէջ կը գտնենք, որոշ կը տեսնենք որ Ըստոշոռսար և Տարր բառերն մի և նոյն նշանակութիւնն ունին. «Տարր կոչէ՝ որ ի չորից ունին զգոյութիւնս. յայտոցիկ չորից տարերց տարերք մարմնոցն. (Շ. բարձր): Իսկ Եզնիկ կը գրէ «Մարդոյ մարմին ի չորից տարերց խառնեալ է, ի խոնաութենէ, ի ցամաքութենէ, ի ցրտութենէ, և ի ջերմութենէ»: Հակազեան կը մեկնէ Տարրն. «Գլխաւոր նիւթ և հիւթ՝ որպէս սկիզբն և մասն բաղկացուցիչ զգալի մարմնոց. մանաւանդ հող, ջուր, օդ, հուր, և բաղկացեալն ի նոցունց նիւթական իրք. բնութիւն ինչ. իսկութիւն. մարմին»: Այսքան օրինակ բաւէ Տարր և Ըս-



տոշոռչաբ բառերն հոմանիշ ընդունելու. գալով բառիս հարազատութեան կամ օտարութեան, ընթերցողն արդէն իսկ նոյն բառի խորթ հնչումէն գուշակած է որ ինչպէս մեր ուսումնական բառերու մեծամասնութիւնը՝ նոյնպէս նաեւ սա օտարէն փոխառեալ է: Մենք այս բառը բաղդատելով պարսիկ **ساقه** = Իշադիզս = Տարր հոմանիշին հետ, Գէորդ Գպիր Տէր Յովհաննէս Պալատեցոյ ընտիր Պարսկ. բառադրքին մէջ կը գտնենք հետեւեալ մեկնութիւնը. «Տարր. Ո՛ւնտար: Որոյ յոգնականն այսինքն չորք տարերք ի միասին՝ լինին **تساخه** = Իււղիւքսամ. արպերէն **خا** | **ص** | **ع** Ա՛նտարի եռպակ. և է սա ծագեալ ի յունականէ» : Ուրեմն բառիս բուն արմատականն է յունարէն հոմանիշ **Στοιχειον** = Ըպիխիոն. իսկ մեր հին բժիշկը նոյն բառը ընդօրինակած են վերոյիշեալ Իււղիւքսամ նոյնանիշ բառէն և հնչեր են Ըստուղուսամ :

### ՏԱՆՊՈՒՌԱՅ

Տանպուռայ. Բէկարանս այս բառը կաղմեր է իտալ Tamburo քերտի բառէն. և կը գործածէ իբրեւ հոմանիշ թմբուկի. ստամբար նկարագրելու ասեն, անոր ձելին հա-

մար կ'ըսէ (յէջ 17) «ա զիհն տափակ է. և ա զիհն գունա է ի փորոն զին, և իր ձենն որպէս տակտոշայ է» :

### ՄՕՉՏԱՏԻԼ

Անծանօթ է Մօհտատիլ բառն. որուն մեկնութենէն որոշ բան մը չի հասկցուիր. բժշկարանն կը գրէ «և այս մօհտատիլն է հիմն ամենայն կենդանութեան» յէջ 11. իսկ յէջ 12 «և քան զամենայն անդամն մարդուն մատներուն կաշին Մօհրատիլ է աւելի և քան զայս աւելի այլ մօհրատիլ իբր չի կայ» :

### ՊԱՒԱՊՆ

Յէջ 18, կը գտնենք Պաւապն որ նոյնպէս մեզ անծանօթ մնացած է. «Եւ ընութեան յուժն ի պաշապն լինի, որ է դ(ո)նապանն, և պաշապն այն տեղեացն ասեն, որ զարնն ի ստամբէն յաղիքն կու զրկէ» : Այս բացատրութենէն կարելի է ենթադրել որ լինի մղող զօրութիւն մը :

### ԱՔՌ

Աքու. (յէջ 18) անտարակոյս պէտք է լինել հոմանիշ ի բառարանս գտնուած Ագուռանք (զիլուած աղբ) բառին. և արդէն ի

բժշկարանին Աքս բառը մի և նոյն իմաստով  
գործածուած է:

Աղէձորտ. գործածուած է իբրև անուն ան-  
մենայն աղեաց. և այս բառն ալ կը պահիսի  
ի բառարանս:

### ՅՐԴՆԻՍԱ

Յրդնիսա կամ Արդնիսա բառն կը նշա-  
նակէ կրնկան կամ աղգեր ցաւ. «Եւ օգտա-  
կար Յրդնիսային և ոսկրացաւութեան և փայ-  
ծագնացաւութեան»: Տես էջ 20:

Յէջ 21 գործածուած է Տալպա բառն որ  
օտար է և կը նշանակէ Անգաւ (Պարսկերէն  
Պարե ٥٦ = անգամ: Տերպարի ٥٦ =  
ի միում նուազի «Պիր Տէֆասէ»: Հմմտ.  
Բառ. Պասի.): «Մասրճուէնն ասէ թէ պա-  
տեհն այն է, որ ամիսն բ (երկու) տարպա...  
այնէ (ընէ), որ կերակուրն...»: Ի Հայկազ-  
Բառարանի, կը գտնենք «Անգաւ. մ. որպէս  
թէ Այն գամ յայն ինչ և յայնչափ ինչ  
նուազի. Հեղ, տարպա. տեֆա, բերրե»  
շեղագիր բառերու միջև գտնուած կե-  
տադրութիւնը մեզ կասկածել կու տայ որ  
օտար տարպա բառը, ասկերէն հեղ բառին  
հոմանիշ համարուած է:

Միւսնոյն էջին մէջ կը գտնենք բառն

բանրակ որ կը նշանակէ մանւաւեղ, բայց  
երբ. «և պալլամի մարդոյն լաւ է, բանրակ  
որ (մանւաւեղ եթէ) նորից լինի»:

### ՆԳՐԻՉ

Նգրիզ օտար բառ է, և կը նշանակէ  
Ռտեւցաւոչքիւն. (Յաւ սոխց անհնարին ի  
յօրս և ի ջիւս. որ և Ռտեւոչքիւն ասի-  
նիգրիզ, նըգրըս. յն. բօտալիւս, բօտալիւս.  
(յորմէ պատագրոս, իբր պոտագրոս) Հմմտ.  
(Հայկզ. բառ.): Մեզ ծանօթ բառարաններու  
մէջ Նգրիզ կամ Նիգրիզ լաւ. իտ. Podagra,  
գլ. Podagre (յն. ποδαγρος = ποδς, ποδός  
ոտն, ἄγρος որս) նոյնանիշ բառերուն զիմաց  
գրուած են Ռտեւոչքիւն, Ռտեւգարոչքիւն,  
Ռտեւցաւոչքիւն: Իսկ ցաւագարն Պոտագրոս,  
Ռտեւցաւ կոչի: Նախնեաց գրոց մէջ ինչ  
որ կ'երեւի նոյն օտար բառին իբր հոմանիշ  
աւելի Ռտեւցաւոչքիւն բան թէ Ռտեւոչ-  
քիւն բառն կը գործածուի (Հմմտ. ի Հայկզ-  
Բառ. նոյն երկու բառերու օրինակներն) -  
իսկ Ռտեւգարոչքիւն բառն ի նախնեաց չէ  
այլ վերջերս կազմուած է:

## ՍՐԲԵՃՈՒՊԻ

Սրբննուպի. կը կարդանք յէջ 24. «Եւ զբերանն մեղրով և Սրբննաշայինով լուանան շատ օգտէ»։ Կը համարուի կտաւատի նման հունտ մի որ կը կոչուի Պզրկատուն կամ Պզրբ էլ-քարոռնա. ըստ Հայբուսակի կտոռա- խոտ :

## ՂՈՒԼԻՆՃ

Ղուլինճ. այս օտար բառը գործածուած է յէջ 23 և կը նշանակէ ցաւ և ոռոտոյց աղեաց. «Գուշակէ որ զտամնքն հովցել է, և փորոքն դռշինն»։

## ՍԱՐԱՏԱՆ

Սարատան կը նշանակէ խեցեղեակի :

## ՏԱՅՈՒՆ

Տայուն = Խոյլ, Ռռեցք :

## ՄԻԼ

ՄԻԼ Պարսկերէն Լու բառն է որ կը նշա- նակէ բռնք. յէջ 26. «Կու խփուի, հանց որ երկաթէ միլ չի բանիր (բանար) զբերանն»։

## ՀԱՅՁ

Հայզ = Հագ էջ 26. «Եւ խոտնի ի այն արիւնն որ ի հայզն գա»։

## ՁՕՁԱԼ

Ձօնալ. Թուրք բառ է հոմանիշ Երեւակի «Եւ Ձօնալ չար աստղ է և հողային»։ էջ 28 :

## ԼԱՁԻՃ

Լազիճ. այս հայացած բառը շատ հաւա- նական է որ փոխ առնուած է պարսկ. Լէզզ Ե = Խիտ, Հիւ բառն. «Եւ Լազիճ պալ- զամին» (էջ 34)։ Անտարակոյս կը նշա- նակէ հիւնցած կամ խոտցած :

## ՔԱՄՈՑ

Քամոց, բթի և ուղեղի միջեւ գտնուած ծակերը այս անուամբ կոչած է. յէջ 34. «Եւ զատ ծակեր կայ քամոցի, և այս ծա- կերուն ներքեւն ք ոսկր այլ կա, ի այն ծա- կերուն զիմացն, որնկէս քամոց, և այս ծա- կերուն որն ծուռ է, և որն ըզորդ է, և այս ծակերն յղեղն հեռու է, այն պատճառին համար, որ յորժամ զշունչն ի վեր քաշէ նա հով քամին յղեղն չի հասնի, և զնն

չանկ» : Ուրեմն քամոց բառը շատ լաւ ի մաստով՝ իբրեւ քամոց գործածուած է :

#### ՓՈՒՇԻ

Փուշի . չի կայ և սա ի բառարանս , բայց շատ հաւանական է որ հոմանիշ ըլլայ Փոշի բառին , ինչպէս հետեւեալ իմաստն ցոյց կու տայ . էջ 36 . « Եւ այլ թէ ի ա տեղ մայլ փռշի կամ մուխ լինի նա կարէ զշունչն քաշել » . յայտնի է թէ ըսել կ'ուզէ որ փռշիի կամ մուխի մէջ շունչ կրնայ քաշել :

#### ԱԿԱՆՃ

Ականճ գործածուած է իբրեւ սրտի Բյրակի տեղ . էջ 40 . « Եւ արարիչն Աստուած ի սիրան ք ախանճ և ք փոր (փորոք) ըստեղծեաց » :

#### ԱՂԵՍՍԱՆ

Աղեստան . անուն ընդհանուր աղեաց , էջ 41 . « Վասն ստեղծման աղեցն » գլխին մէջ մի քանի անգամ նոյն իմաստով գործածուած է « Եւ այլ պազի աղեստանն փաթուլթ են » . էջ 42 . « Եւ այլ իմացիր որ Աստուած այս աղեստանս ծուռ և տափակ ըստեղծեք որ կերակուրն ամենուն մէջն կենա , և զուս

անկ » : Այս բառով կարելի չէ՞ անուանել մարդու իրանին այն մասն ուր ամփոփուած են ամբողջ աղիք :

Աղեաց անգամազննական նկարագրութեան մէջ իւրաքանչիւր զատ աղիք յատուկ օտար անուններ ունին , յէջ 41 կը կարգանք . « Յառաջն ասեն Միաի սինա . Շարիայիա . որ է երկայնութիւն ժր մտ առկն մարդոց իւր մատովն . թէ մեծ՝ թէ փոքր . և այլ՝ պազի աղեստանն փաթուլթ են , ծուռ և ճուկ են : Բայց այս աղիքն որ ժր են . ըզորպէս է և ինքն ի ստամոքն կիսպ է . պաւապ ասեն » : Այս տողերուն մէջ կը գտնենք երեք բառ Միաի սինա , Շարիայիա և Պաւապ որ ըստ բացատրութեան սեփականելու է *Duodénium* բառին որ կը նշանակէ այն աղիքը , որ ստամոքսին հետ միացած է , և երկայնութիւնն երկոտասան մատ կը համարուի . ըստ մի քանի գաղղ-հայ և իտալ-հայ բառագրոց , հայերէն իբրեւ հոմանիշ յարմարցուած է Աղեճոց , Խիւնճ աղեաց , Աւաջեաղի , Նախաղի , Նախիճ : Իսկ միւս նրբաաղեաց ալ մասնաւոր անուն կու տայ . Եթ-յստսը կ'անուանէ Սայլիս . յէջ 41 . « Եւ ք աղեցն անունն Սայիս ասեն , որ ի ժիր՝ ինքն պարապ է , և դարտակ է այս աղիքս

ասեն, որ կերակուրն շուտ անձնի իրմէն, և չի ամել ինքն»։ Գիականորու մէջ այս աղիքը միշտ դատարկ գտնուած է, և անոր համար մեր նոր բառարաններու մէջ այդ բառը կոչեր են Սիւնադի, Գատարկադի, Անտառադ և Ադիւմ. «Ադիւմ — բարակ աղիքն՝ զոր Անօրի կոչեն բժշկերն. Intestino ileo». այսպէս կը գրէ Չախչախեան, իւր հայ-իտալ բառարանին մէջ. բացատրութիւնը ճիշտ է, բայց իտալ բառին սեփականութիւնը սխալ: Իսկ երրորդ նուրբ աղիքն՝ կ'անուանէ Յամա յայխսիդադ, էջ 41. «Եւ գն յամա յայտիդադ ասեն, և ինքն փաթուլթ փաթուլթ, և ինքն շատ արգելի»: Եւրոպական բառն է Ileon, Ileum (յն. ειλειν գտնուալ) մեր բառագիրք շինած են Գալարադի (Քաջ. և Նոր.), Փարոյք (Չախչ.): Ստուար աղետաց ալ առանձին անուններ կու տայ: էջ 41. «Եւ այլ գ աղիքն որ հաստ են ակն ասեն Աւար, ինքն աղիք մին է հաստ և ա բերան ունի . . . և ինքն նման է բէսայի». ասոր զաղղ. բառն է Cæcum (Կոյր). Ի մեզ կոչուած է Բըլադի (Չախչ.), Կոչրադի (Քաջ. և Նոր.): Երկրորդը կ'անուանէ Աշիդոչի էջ 42. «Եւ բին աշիդոչի ասեն, և ինքն աղիք մն է հաստ, և ամուր». Գաղղ. հո-

մանիչն է Colon. հայ Հաստադի կամ Կոդոն (Չախչ.), Վերնադի (Քաջ.), Խրադի, Աղեխիք (Լուս.) կոչուած է նաեւ Յամարադի, իսկ Նորայր սխալելով Գալարադի անուանած է: — Ամենէն վերջինը կ'անուանէ Անայի մուստադիւմ. էջ 42. «Եւ գին ասեն աւայի մուստադիւմ, և ինքն աղիք մնէ հաստ ըզորդ, և քան զամէնն հաստ՝ լայն՝ և մեծ . . . Եւ այլ իմացիր որ Աստուած այս աղետանս ծուռ և տաբակ ըստեղծեր որ կերակուրն ամենուն մէջ կենայ և զուժ առնէ, և շուտ չելանէ ի արտաքն, և ամէն ժամ մարդու կերակուր ուտել չի պիտնա . . . և եթէ բարակ լինէր անձարակէր, պիտէր որ զուրս ելանէր շուտ շուտ. և մարդուն ամէն որ զէտ լուծման զեղի պէս գործ ցնէր»: Բառագիրք այս վերջին աղիքն կը կոչեն Rectum. Հայերէն Նախադի, Թախակ (Քաջ. Նոր.). Նուպար ասոնց վրայ աւելցուցեր է նաեւ Յետնադի: Բժշկարանին յիշեալ բառերն օտար են և աւելի արարերէն: Բժշկարանին մէջ աչքի զանազան մասերը յատուկ բառերով կ'որոշուին և ամենուն նկարագիրը շատ պարզ է:

Մուծանիմա կոչի աչաց արտաքին ձեռմակ կարծր թաղանթը, որ ըստ բառազրոց՝ կոչի կարծրամաղանթ կամ Սպիտակուց աչաց (Քաջունի), ըստ Նորայրի՝ կարծրենի, Սպիտակուց, Ճարս, Ճրագոչ ախան, գաղղ. Sclérotique յն. σκληρός = կարծր: Զախջախ. յոյն բառը տառագրածելով՝ Սկլերոս անուանած է: Մի քանի բնագիտական և բնապատմական գասագրոց մէջ այդ յոյն բառը թարգմանուած է կարծրամաղի. Սպիտակ լուսն (Հմմտ. Ֆիզիգա 1856 և Կեկեղանաբանոչրիւն 1897 Վիեննա): Այսքան հոմանիշներէն ամենէն աւելի գործածական գարձեր է կարծրենի բառն՝ անտարակոյս աւելի հայաշնորհ և ներգաշնակ ըլլալուն համար: Բժշկարանը Մոչրանիմա բառը հետեւեալ ճիշդ սահմանով կը նկարագրէ. «Այլ գիտացիր որ աչքն և թապաղայէ (թաղանթ) ըստեղծեր արարիչն Աստուած, և առաջի պապաղային ասեն մութահիմա, և ինքն երեւելի է և զաչացն ամէն եզերքն բոներ է, և ինքն նօսք է և խիտ ըսպիտակ»: Ըստ մարդակազմական գիտութեանց աչաց այս թաղանթը տեսութեան ամբողջ մասին արտաքին պատեանն է, առջեւն և ետեւը ունի մի մի ծակ:

Ղանիա՝ այս անուամբ կոչուած է կարծրենիի առաջակողմեան ծակին մէջ զանուած թափանցիկ թաղանթը՝ որ գաղղ. կը կոչուի Cornée (լատ. Cornu = եղջիւր) զոր մեր բառագիրներն թարգմաններ են Եղջերիկ (Քաջունի), Եղջերենի (Նորայր). կոչուած է նաեւ Եղջերեպ (Նուրիճան), Լուսանցիկ (Լուսնեան): Այսքան հոմանիշներէն ամենէն աւելի ընդունուած է Եղջերենի բառն: Կը զարմանանք որ գրասէր Ե. Տէմիրճիպաշեան չի գոհանալով այդ մի քանի հոմանիշներէն կերտեր է Ալիսաստառ = ալքիսաստառ բառը. զոր աւելորդ և անընդունելի կը համարինք. յարգելի գրասէրը եթէ զիտնար որ աչքը մի միայն այդ թաղանթէն = աստուէն կազմուած չէ, այլ ուրիշ զանազան աստաներէ, պիտի զգուշանար այդ նորակերտութեանն. այդ բառը ինքն գրասէրը կրնայ սեփականել լայնարար աչաց ամէն մի թաղանթներու:

Մեր ուսումնասիրած ձեռագիրը այդ թաղանթին համար կը գրէ. «Եւ բ (երկրորդ) տապաղային Ղանիա ասեն. այնոր համար է որ այս տապաղան պինտ է, որպէս եղ-

Ղիւրի նման է, և գուն նորա սպիտակ է»: **Եւ** անտարակոյս եղջիւրի նմանելուն համար համանուն անուամբ կոչուեր է:

#### ԱՆԱՊԻ

Անապի, «**Երրորդ տապաղային անապի տանն**, այնոր համար որ այս տապաղաս նման է խաղողի, և ինքն բիշ մը զուրս է եկեր. և ի ներս չէ գնացեր և գոյնն սպիտակութեան կը զարնէ»: Այս անապի կոչած թաղանթն գուցէ լինի աչքին Ծիւսմանը Iris: Յաջորդ գլխոյն մէջ բժշկարանը Անապի թաղանթին համար հետեւեալը կը զրէ. «**Երրորդ տապաղային զօրութիւնն այն է**, որ երկոսում տապաղային զօրութիւնն տա և կերակուր. և զիր ամբութիւնն բուստուպաթի ճալիտէն պահէ. և յորժամ որ պայծառ և պսպղուն իբր տեսանէ, նա աչացն լոյսն չի ցրուի, և ի ժիր տեղն կենա»: Այս բացատրութիւնն ալ այնքան որոշ չէ որ կարենանք հաստատել որ Անապի բառն ստուգիւ աչաց Ծիւսմանը կը նշանակէ:

#### ԱՆՔԵԱՎՈՒԹԻ

Անքեապուծի, բժշկարանը այս բառով կ'անուանէ աչաց չորրորդ թաղանթը. կը զրէ.

«**Գ** (չորրորդ) տապաղային անքեապուծի անսն, այնոր համար է որ ինքն նմանէ սարգոսին (սարգոստայն), նօսը և ցանցառ. և գոյնն խիտ սպիտակ է և պայծառ»: Այս բացատրութենէն որոշ կը հասկցուի որ Անքեապուծի կը նշանակէ աչաց այն կակուղ թաղանթը որ կը կոչուի Սարդոստենի (Քաջ.) Rétine (լատ. rete = ցանց), Յանցաուեսակ (Զախլախ), Յանցամաշկ կամ Յանցամաղանթ (Նուրիճան. ֆիզիզա), Յանցենի (Նորայր, Նուպար, Տէմիրճիպշ): Այս հոմանիչներէն ամենէն ընդունելին կ'երեւի Նորայրի կերտած Յանցենի բառն:

#### ՇԱՊԱՔԱ

Շապաքա, բժշկարանը այս թաղանթին համար կ'ըսէ. «**Հինգերորդ տապաղային Շապաքա կ'ասն**. այն որ նմանէ ինքն աղին, երեսին քօղին, և ինքն խիտ նօսը է և բարակ»: այս բացատրութենէն կրնանք ենթադրել որ Շապաքա բառն հոմանիչ ըլլայ Ապակամիզն (Քաջ.) Hyaloïde (յն. υαλος ապակի, εἶδος ձեշ) բառին, քանի որ այդ թաղանթին ներկայ գիտունք եւս նոյն բացատրութիւնը կու տան: Իբր հոմանիչ Ապակամիզն բառին կը գտնենք Ապիկենի (Նոր

այր), Ապակենի (Նուպար, Տէմիրճիպաշ.)  
Ապակալերայ, Սառնորակ, Ապակալա-  
ղանթ, (Լուսին.): Զախճախ. Էրոպական հո-  
մանիշը ածականաբար գործածած է Ապա-  
կեղէն, Ապակամման: Ո՞րն է այսբան հոմա-  
նիշներէն ճիշդն կամ ընտրելագոյնն, ըստ իմ  
համեոտ կարծեաց՝ այս մասին առանց քննու-  
թեան կարելի չէ վճռական պատասխան տալ:

ՍԻՂՈՒՔԷ – ՄԱՇԻՄԱ

Բժշկարանը այս թաղանթներէն զատ կը  
յիշէ ուրիշ վեցերորդ և եօթներորդ «դա-  
պաղա»ներ ալ: Կը գրէ «Վեցերորդ տապա-  
ղաին Սիլպիքէ ասեն. և ինքն ամուր է քան  
զամէն տապաղանին, զոր յիշած է: Եօթ-  
ներորդ տապաղաին, Մաշիմա ասեն»: Զի  
կրցանք հասկնալ թէ այդ երկու բառերն ա-  
չաց որ մասին յատկացուած են: Յիշեալ  
ամեն բառերն օտար են, որոց կիրառութիւնը  
հեղինակաց ողջմտութեան կը ձգուի: Այս  
և ասոնց նման օտար բառերը գործածելէն  
պէտք չէ այնքան մելեռանգութեամբ զգու-  
շանալ, երբ որոշ կը տեսնենք մեր բնիկ լե-  
զուին զիտական բառերու աղքատութիւնը.  
մենք տեսանք որ յիշեալ օտար բառերու հայ  
հոմանիշները գրեթէ ամբողջովին նորակերտ

են և շատերն անյաջող թարգմանուած. լե-  
զուական աղքատ պարագաներու մէջ, ըն-  
տրելի է օտար բառերը տառագարձելով իւ-  
րացնել:

ԿԵՂԻԿՈՆ

Կեղիկոն. այս բառը հին և նոր բառազրքե-  
րէն կը պակսի, և այս բժշկարանիս մէջ (էջ  
47) իբրև հոմանիշ Գայրիկոնի (պուսկու)  
գործածուած է. ականջի բացատրութեան մէջ  
կը կարդանք. «Եւ ծակն ականջացն, ոլոր  
ոլոր է, զէտ կեղիկոն, և ասուած իւր ողոր-  
մութեամբն այնոր զայն հանց է արարեր, որ  
կամ վատ հոլ կամ հոլ ինքն չի մտնէ»: Կեղիկոնի  
ընդունուած ուսումնական բառն  
է Խալիզոն Limaçon. «Եղև ականջն ըստ  
օրինակի Խալիզոնի՝ զրամբը շրջմամբ հնգօր,  
զի իբրև առ թագաւոր հանդարտութեամբ  
մտցեն բանք և ձայնք, և մի անզգուշաբար»  
Ուկեփոր: Ոմանք թարգմանելով եւրոպական  
հոմանիշը կը գործածեն Խղունջ բառը, բայց  
լաւագոյն է Խալիզոն հին և նախնական ճիշդ  
բառով գոհանալ և խոյս տալ անպէտ նորա-  
սիրութենէ. ըստ մեր համեոտ ճաշակին  
Խղունջ հոմանիշէն զերագասելի է Կեղիկոն  
բառը շնորհիւ իր հնութեան: Ականջին այդ



մասը արտաքսապէս մի բիշ խղունջի կը նմանի բայց ներքսապէս կեղիկոնի (զայլիկոն) յար և նման է, ուստի աւելի տրամաբանական է նոր թարգմանեալ բառը արտաքսել և հին պատշաճ բառն ընդունիլ:

## ՊԱՏԱԼՈՐ

Պատաւոր. բժշկարանիս մէջ այս բառը շատ անգամ գործածուած է և մենք իմաստէն կը գուշակենք որ Յղի բառն նշանակէ:

## ՊՈՌՆԿ

Պուռնի՛ Պոնտոսի հայ գաղութը այս անուամբ կը յորջորջէ Պոկունք — շրթունք բառը: Պոնտացիներն մանուկ այս բառը գործածելու է իր բժշկարանին մէջ (էջ 53). «Եւ ի պուռնին, և ի բերանէ»: Ն տառին զեղջմամբ կոչուի նաև Պռոչկ:

## ՓԱՅՈՒԱՆԴ

Փայուանդ, բժշկարանս այս բառը կը սահմանէ հետեւեալ կերպով «Վասն փայուանդ գերուն — որ է այն իրքն, որ ք (երկրորդ) ոսկրն ա աի (մէկմէկու) կիցէ (կը կցէ) Աստուծով. զիտացիր որ ամենայն փայուանդն որ ի մարդն կա...». այս բացատրութեւն

նէն կը հասկցուի որ բառն փայուանդ հոմանիշ է Անաու, Խաղցախղճու բառից: Փայուանդ պարսիկ փէյէվէնտ Ծոյ: բառին հոմանիշն է. և կը նշանակէ «կապ յօղուածոց» (Հմմտ. Պարսիկ-հայ բառարան. Պալատեցի):

## ԶԷՀ

Զէն բառ պարսիկ օյ = զէն կը նշանակէ ծնունդ, սաղմ. «Եւ կու տանի զէն տալն անձին»: էջ 58:

## ՍՐԲՆՃՈՒՊԻՆ

Սրբնճուպին, այս օտար բառը զրութեանս նախընթաց էջերուն մէջ, կտուախտաի հետ նոյն համարած էինք. մենք նորէն նոյն բառը բժշկարանիս յաջորդ էջերէն միոյն մէջ (58) պատահելով, լաւ կը համարինք յիշել այն նամակը, զոր այդ բառին ստիւ Դաւրիմէն Լ. Թ. ստորագրութեամբ զրասուր և քննասէր մը բարեհաճներ էր ինձ յղել: Յարգելի պարտնը կը զրէր. «Այս կողմերը կը պատրաստեն տեսակ մը զովացուցիչ ըմպելիք եփելով 3 մաս շաքարը մէկ մաս քացախի հետ. այս ըմպելիքին անունն է Իսրէնճէպին կամ Սրբէնճէպին, և պարսիկները անկէ շատ կը

գործածեն ամառը. «Բազմալէպ»ի 6րդ թուի 255րդ երեսի վրայ Չեր յիշած Սրբնհուպլին թերեւս այս ըմպելիքն է և ոչ թէ կտուռախտը» : Ճիշդ է, մենք նոյն բառը կտուռախտ կը համարուի ըսեր էինք. տարակուսական էր մեր գրութիւնը, ինչպէս նաեւ մեր յարգելի քննասիրինը. մենք այժմ իր զիտողութեան աւելի հաւանականութիւն կ'ընծայենք. բժշկարանէն ի մէջ բերուած հետեւեալ օրինակը. «Եւ գրեբանն մեղրով և սրքնձոռչպիւնով լուանան շատ օգտէ» անտարակոյս ըմպելիք մը կը նշանակէ քան թէ հունտ մը : Բժշկարանիս 58րդ էջին մէջ կը կարդանք «Քան զկերակուրն առաջ և սրքնձոռչպիւն սուր, որ զստամոքն ուժովցնէ, և կերակուր տայ ուտել», հետաքրքրական է զիտնալ թէ Պ. քննասէրին այդ ըմպելին այս յատկութիւններն ունի :

#### ԻՏՐԻՖԻԼ

Իտրիֆիլ գուցէ նշանակէ եւրոպ. բան Hydrophille (յն. Ծծօր ջուր, φύλλον տերեւ) որ բոյս մըն է :

ՍՔԹԱ. ՖԱԼԻՃ. ԹԱՇԱՆՈՒՃ. ԼԱԿՈՒԱ.  
ԸՌԱՅՏԱՆ. ՇԱԿԻԿԱ.

Սքթա. Ֆալիճ. Թաշանուճ. Լակուա. Ըուսիշահ. Շակիկա. այս բառերը կը զրտնանք «Վասն զինի խմելոյ» պարբերութեան մէջ. ամէն ալ առանձին հիւանդութեանց անուններ են : Բժշկարանի այդ էջն (61—62) մի քանի սող յիշելով, կ'ուզենք ցոյց տալ թէ նախնի բժիշկները զինիի գործածութեան մասին ի՞նչ առողջաբանական գաղափարներ ունին : Կը կարդանք. «Չաքարիայի որդին ասէ թէ որ զզինին չափով խմէ, և օգնութիւնն այն է որ առաջին զանձն տաքցնէ (ի՞նչ կ'ըսէ «Մի խելի») զիտնական հետեւեալը բժշկապետ Արծրունին), և զկերակուրն հալէ, և զրնական տաքութիւնն զօրացնէ, և զկերակրին ուժն ի անձն ցրուէ, և զպրիւնն պայծառ առնէ, և զզեղնութիւնն տանի և թէ զինքն աղէկ կերակրի վրայ խմես զՋրին զիճութիւնն ի անձն ճապղի. և անուշ բուն առնէ. և զսիրան խնդացնէ (ոմանց տխրեցնէ) և այս ամենայն այն ժամ լինի, որ զինք չափաշոր լինի խմելն» — զիտել կու տանք չափաւոր բառը — «և յորժամ աւելի և չափու անձնի և հարբենա նա. այսու

հակառակն լինի. և այս ամենան շահն զեն  
 դառնա և յօգուածքն վատուցնէ, և զինքն  
 կորցնէ, և ի պեղծ հիւանդութիւն բերէ, որ  
 սկսի տեղ չի լինի անճարակս»: — Զարա-  
 րիայի որդւոյ գաղափարն այս է, յիշենք մի  
 այլ ծանօթ բժիշկի խօսքերն, ուր գործածուած  
 են վերայիշեալ աստանիշ բառերն. — «Գե-  
 ղիանոսն ասէ ի բնութեան զիրքն. զինի խմելն  
 շատ ազդի ցաւեր առ մարդն բնծայէ, որպէս  
 Ալքիա (կը նշանակէ Մահամերձ հիւանդի  
 մը ունեցած ջղաց բռնաբռնիքն), Ֆալիւն,  
 (Կողմնատար = մէկ կողմն մնիլ, թուլանալ,  
 մանաւանդ զլիսոյ, ձեռաց, ստից), Թաշանուհ  
 (Զղաձգութիւն = Զղաց քաշքշուծիւնն) և  
 որ ի զլուխն ի շուրջ գայ (զլխի պտոյտ),  
 Լակուա (Կզակարսիութիւն = ծոմակիլ  
 կզակի), և Ըռակշան (Զեռաց ստից զողզո-  
 ջումն), զկացաւութիւն և Եակիկա (կէս զլիսա-  
 ցաւ?) և ուրեց որ ի լերդն լինի, բշտեր և  
 խոցեր մեծամեծ, և կալուած ի անդամն, և  
 ան ցաւերն, որ ժամանակաւ չերգա ի մարդէն,  
 և յետոյ մեռանի ի այն ցաւոյն»: Յառաջ  
 կը վարէ բժշկական խրատները և կը պա-  
 տուիրէ թէ որ բնութեան տէր անձինք պէտք  
 են զինի խմելէ զգուշանալ, և թէ հակառակ  
 այդ պատուէրին որչափ հիւանդութիւնք յա-  
 տաջ կու գան:

## ԽՈՒՄԱՐ

Խումար հոմանիշ է արաբ. **خمار** Խիււար  
 բառին, որ կը նշանակէ զինովութենէն ա-  
 տաջ եկած զուարճութեան՝ յաջորդող տխրու-  
 թիւնը: «Շատոց զլիսացաւութիւն բերէ, Խու-  
 վար, և այնոր համար որ ...» (էջ 62):

## ՊԱՆՏՐԻ

Պանտրի ջուր, որովայնի պնդութեան դար-  
 ման տանելու պատուէրներուն մէջ կ'ըսէ  
 (էջ 64). «Եւ եթէ լինի որ փոքն պինտ,  
 պիտի որ տաս զմրքաց ջուրն, և զպակտրիկն  
 ջուրն ...». Ըսել կ'ուզէ Պակտրի (Փեկեր)  
 ջուր:

## ԸՌՁԻԱՆ

Ըռզիան (էջ 64) ուրիշ բժշկարաններու  
 մէջ գրուած է նաեւ Ռզիան, Ռազիան (Թրք.  
 Ռեզեկէ **عزج**), արաբ. Ռազիկէն, ըստ Ա-  
 միրա. Պրսի. **عزجان** Պատիլեան որ Պրսկ-  
 Հայ բառարանի մէջ, Պրս. Բազպալ բառին  
 հոմանիշ ընդունուած է և իբրեւ Սամիթ բառը  
 նշանակող): Ամիրտովաթ այս բառի մասին՝  
 գրած է հետեւեալն. «Ըռզիանն ... երկու  
 ցեղ կու լինի, վայրի և ամվոց. լաւն այն

է որ դալար և մատղաշ լինի ... Իպն. ասէ, թէ առաջին նախահայրն Ադամ ասցել է թէ մարդ մ'որ դարնան առաջին օրն արեգակն ի Խոյն մտանէ մինչև ի Խեց գետին երթայ, որ է աման անջի օրն, յամէն օր մէկ մթխալ Ընդիանի հոռնտ, մէկ մթխալ Շաքար խառնէ և ուտէ նա, մէկ տարի ան մարդն հիւանդութենէ անհոգ լինի և առողջանայ: Եւ այլ զարմանալի բան մ'այլ այս է, յորժամ ձմեռն լինի՝ օձերն ի գետնին ներքեւն կու մտնուն և պառկին և կուր, աչվին չի տեսնուլ. և յորժամ գարուն լինի՝ կուր ի գուրս կ'ելանեն և կ'երթան Ընդիանն կու գտնուն, և զօրն կ'ուտեն և զօրն աչիցն կու դնեն, և աչվին կու բացվի, և արարիչն Աստուած զան օձերուն տեսութիւն ի յայս խոտս է զրել, և նմա փառք յաւիտեանս»: Ասոր նման վկայութիւն մ'ալ կը կարգանք Մեծն Բարսեղ Կեսարացոյ զրբին մէջ (Վեցօր. Թ.). «Օձի աչք յորժամ ցաւիցեն, երթայ ուտէ զումրայ, այսինքն սամիթ վայրենի, և ողջանայ»:

Յիշեալ բանն Ընդիան ուսկերէն է, որուն իբրև հոմանիշ զրականութեան մէջ գործածուած է Սամիթ, ըստ Նորայրի Հռոմ Սամիթ. զգ. Fenouil. ցն. Ανήθον կամ

Μάραθρον. լտ. Anethum կամ Marathrum, Foeniculum. Խա. Finocchio: Այս օտար բառերը բժշկարանաց մէջ տառադարձուեր են Անէթոն, Մարաթրոն:

### ՂՕԼԻՆԻՃ

Ղօլինիճ. Կը նշանակէ աղեսց ցաւ և ուռոյց. ըստ բժշկարանին «եթէ բնութիւնն կակուղ, և ուզենա որ արտաքս ելանէ, և թէ արգիլելն Ղօլիլիճ աննէ, և չուզենա կերակուր բնաւ». կը յիշէ նաեւ այդ պատճառաւ ուրիշ ինչ հիւանդութիւններ որ յառաջ կու գան: Տես Ղաշիլիճ: (Էջ 28):

### ՍՈՒՆԿ

Սունկ. ըստ բժշկարանի նկարագրին՝ այս բառը կը նշանակէ Թորք. մայասիղ. որուն իբրև հոմանիշ կը գործածուին շինծու բաներն Արիւնէրորոշիւն, Թրախտորոշիւն. Թորքք. և այլն. զգ. Hémorrhoides. «Եթէ շատ լինի նստել նա սունկ աննէ»:

### ՄՐՏԺՐՈՒԹԻՒՆ

Մրտժրութիւն. Էջ 65 «սիրտն խնդացնէ, և բարկութիւնն ի սրտէն տանի, և մրտժրորոշիւնն այլ տանի» գուցէ ըսել կ'ուզէ մտացժրութիւն:

## ՄԱՆԱԽՈՒԼԻՍ

Մալախուլիա . էջ 65 «և օգտակար է Մալախուլիային տիրոջն» կը նշանակէ Մալակահաթ (Լուսնաս . ան . Թոռքարդդը . Epi-leptique) . Խեուլթին . Երեւակայութիւն :

## ՇՕՐՈՒՍ

Շօրուս նման պարսկերէն հոմանիշ شوره  
Շօրպա բառին , որ կոչի նաեւ Շօրպա ,  
Իպա , Իպակի , Շօրպէ և Շօրվա . հայերէն  
գործածուած հոմանիշն է Թան (էջ 67) ,  
«Պարտ է որ գ օր առաջ շօրոշա ուտեն» :  
Թրք . Չօրպա :

## ՄԱՏՊՈՒԽ

Մատպուխ արար . բառ է և կը նշանակէ  
մեր հայերէն թաշոյ բառը , գաղ . Décoction .  
կոչի նաեւ Մտպուխ : (էջ 67) :

## ՍՈՒՖՈՒՖ

Սուֆուֆ . պրակ . صوفی Սիւֆուֆ բառին  
հետ նոյն է : Պարսկ-Հայ բառարանն այդ  
բառն հետեւեալ կերպով կը սահմանէ . «է  
յայտնի զեղ ինչ առ բժիշկս . զի զմասունս  
զեղորէից մանր լեւեալ , ի գործ ամեն որպէս

զփոշի : Եւ եւս է խոտ իմն՝ զոր կոչեն Խօ-  
րատուէի , որ օգտակար է յոյժ ի վարել ար-  
տաքս զճճի որովայնի» : Բժշկարանը «սաֆ-  
րային տիրոջն» կ'ապսպրէ և լաւ կը հա-  
մարի մատպուխ , սուֆուֆ , և շապն :

## ՊԶՐԳԱՏՈՒՆ

Պզրգատուն Արար . جز قطونا Պզեր էլ-  
բարոշնա : Ըստ Հայբուսակի , կոչի նաեւ  
Բզրկատուշն , Կտոշախոտ :

## ՄՐՏԱԺԱԺ

Մրտաժաժ . կրնանք ըսել որ բժշկարա-  
նիս մէջ գտնուած նորակազմ բառերէն , ա-  
մենէն ընտիրներէն մին կամ ընտրելագոյնն  
սա է , զոր իբրեւ հոմանիշ կրնանք գնել զզ .  
Palpitation նոյնանիշ բառին առջեւ . մինչեւ  
ցարդ իբրեւ հոմանիշ գործածուած են հին  
բառերն Բարսխոշն (սրտի) . Թռնդ ,  
Թնդիւն . որոնց կը զերագասներ Մրտա-  
ժաժ բառը , որ թէ՛ լաւ կազմուած է և թէ՛  
հիւանդութեան ճիշդ և ուղղակի բացատրու-  
թիւնն է :

## ՂԱՐՈՒՐԱ

Ղարուրա զաւտական բառ, կը նշանակէ փարչ « և յորժամ զողն դարոշրաւ աննես. թող որ պահմն կենա, և թէ աւազ կամ պղտորութիւն կայ ի տակն իջնու դարոշրա յիւն, և սպա խմանաս ցաւուն հիմն »: (Էջ 84):

## ՔՈՒՆՃ

Քունճ կը նշանակէ Ասկիւն, աղաւաղումն է պարսիկ քիւնճ հումանիշին. Էջ 103 « և ի տան քուէն նստելն », տան մէկ անկիւնը քաշուիլն բսել կ'ուզէ:

## ՍԻՆ

Սին պրսկ. Զա Սի կը նշանակէ Բարակացաւ: (Էջ 103):

Մենք յիշեցիւք բուն մարդակազմութեան մէջ զանուած խորթ ու հարազատ բառերն, որ կը պակսին մինչեւ ցարդ հրատարակուած գրքերու մէջէն. իւրաքանչիւր բառերու մեկնութենէն՝ ընթերցողն անտարակոյս հասկըցաւ, թէ այն նոր բառերէն որք կրնանք մեր գործնական գրականութեան մէջ ընդունիլ և գործածել: Այդ բառերէն մեծ մասը արաբ

կամ պարսիկ բառեր են, որոնց զործածութենէն բոս մեր նախնեաց, պէտք չենք խորշիլ, եթէ չունինք անոնց հումանիշ ծանօթ բառերն: Քիչ են բժշկարանիս մէջ զանուած անծանօթ հարազատ հայ բառերն, որոնցմէ մի քանին այնքան լաւ կազմուած են, որ նախածանօթ ընդունուած հումանիշներու տեղն կրնան փոխանակել: Այժմ բժշկարանիս զեզորէից բաժնէն կը յիշատակենք այն մի քանի ուսումնական բառերն, որոնք Եւրոպական ընդուէ փոխ առեալ են, և տառադարձութեամբ զործածուած: Հրատարակելով այդ բառերը, մենք ցոյց պիտի տանք թէ օտար բառերու զործածութենէն ո՛չ միայն նախնիք, այլ և վերջնադարեան ուսումնական անձինք հարկ եղած ժամանակ չեն խորշած. և զանոնք ընդուներ են առանց նոր ու կաշկանդուած քմածին բառեր ստեղծելու:

## ԱՄՕՆԻԱՔ

Ամօնիար. Մեր ներկայ ուսումնասէր անձինք, գիտեն արդէն թէ այս բառը թէև ունենայ իր մի քանի հումանիշները, սակայն շատերն լաւ համարած են ընդունել այդ բառը իբրև միջազգային և հանրացած. ուստի թէ խօսակցութեան և թէ գրուածոց մէջ

ընդհանրապէս՝ զայն կը գործածեն: Բառի ստուգաբանութեան մասին տես «Բազմալէզ» 1898. էջ 564: Հին հոմանիշն է Աւշակ, Անուշադը:

### ԳՕԼԳՕԳԱՐ

Գօլգօդար. (գգ. Colcotar). Ի բառ-գիրս կոչուեր է նաեւ Կոլկոտար, Այրած արջասպ (Քաջ.) Կարկասար «Կարկասար. այրած արջասպ օթխեցի = Ուխտեցի». (բժշկ.) Գերոքսիտ երկարի? (Հուս.) նկար-չութեան մէջ կը կոչուի նաեւ Կարմիր Անգղիոյ կամ Բրազիլոյ Rouge d'Angleterre կամ de Prusse. — Փօլքօրար (Վիժրիօլի), Կոդքօրար. Երկարահող՝ կը գրէ մի դար առաջ հրատարակուած բժշկա-րան մը. «Այս անունը ան հողին կու տանք, որ կը մնայ իմպիլին տակը ուռուհը անն-լէն ետեւ. ասոր թողը կը ցաննեք խոցերու վրայ, որ մնամնները կերցընել տանք» — (Համառ. «Նիւթ բժշկական» էջ 124. Յովհ. բժշկ. Օղուլլուսեան, Վենետիկ 1806):

### ՏԻՍԱՆԴԵՐԻԱ

Տիսանդերիա. գգ. Dyssenterie. Մանուկ Պոնտացին այդ բառը փոխ առեր է, իտ.

Dysenteria հոմանիշէն: Մեր բառադրոց մէջ այդ բառին իբրեւ նոյնանիշ գործածուած են Թանչը. Ախտ Թանչից, Թանչակալ ախտ, Թանչախտ, Վատաղուծիւն (յն. δυσενտերια = δύς վատ և έντερον աղիք): Բէստէն իր բառադրքին մէջ կը շարէ «Տի-սենթերիա (իտ.), Տիգենթերիա սոչայրիլիս (լտ.), Քան իսալը (տճ.), Խոռնիռիվ (պրսկ.), Չէիլիք իլ տեմ (արաբ.), և ըստ մեզ՝ Արիւնխաւան փորնարտչիւն, կամ Թաւնչա-խաւան որովայնահոստչիւն, կամ Արիւնչա-յիւն որովայնահոստչիւն, և կամ Թրախ-տայիւն փորագնացոչիւն», և այսքան բառեր կազմուած են ուսումնական գիտութեանց և նա մանաւանդ մեր մամուլին անծանօթ մնալնու համար. ոմանք ընդհանրապէս կազ-մուած բառերու չհաննելով, նորեր կը ստեղ-ծեն. այլք՝ հիներուն տեղեակ չըլլալով, բա-ռակազմութեան կը դիմեն. որով հոմանիշ բառերու կոյտ մը կը դիզեն, որ շատ ան-գամ լիզուն ազաւազելու՝ քան թէ հարստա-ցընելու կը ծառայեն. ըստ մեր տկար կար-ծեաց, վերոյիշեալ հոմանիշներէն կարող ենք գործածել կամ հին Թանչը բառն և կամ միջազգային և ըստ բժշկարանին Տիսանդե-րիա փոխառեալ բառն:

## ՏԻԱՍԳՈՒՏՈ

Տիասկորուո. իա. *Diascordio* (յն. *διὰ*  
 ընդ և յա. *scordium* զարօշ [սոյս]) բառին  
 տառագարձութիւնն է: Թարգմանարար կո-  
 շուեր է *Չարօշարեղ* (Գաջ.): ՏՃ. Սարևոշ-  
 սար մաձռնոշ: Բէսաէն կը գրէ. «է զեղ  
 Թանձրամած զօրէն թիւրակէսի, հոտաւէա,  
 և սասակահամ, միանգամայն և օգտաւէա ի  
 զիպուածս ջղային ախտից, . . .»: Հմմտ.  
 Բժշկականութիւն. Վենետ, 1832. էջ 376:

Այս բառերուն նման ուրիշ գաղղ. իտալ.  
 և լատ. ուսումնական օտառ բառեր կը գրա-  
 նուին զեղօրէից բաժնին մէջ. և ամէնն ալ  
 տառագարձեալ են:



## ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ՀԱՐԱՋԱՏ ԵՆ ԱՆՀԱՐԱՋԱՏ ԲԱՌԻՑ, ՈՐ ՅԻՇՈՒՄԾ  
 ԵՆ ԳՐԹԻՍ ՄԵՂ

Ա,կանճ 30	Բաբախուհն (սրախ) 49
Ա,կնասաա 35	Բահրակ 27
Ա,ղէիիթ 33	Բարակայաւ 30
Ա,ղէձոց 31	Բլթակ 30
Ա,ղէստան 30	Բլշաղի 32
Ա,ղէճորտ 26	Բօտաղբա 27
Ա,ղիճ 32	Գալարաղի 32
Ա,ճաւ 41	Գայլիկոն 39
Ա,ժօնխաբ 51	Գոլգոթար 52
Անապի 36	
Անեթոն 47	Դասարկաղի 32
Անբեպութի 36	
Ապակաթաղանթ 38	Եղէրեայ 35
Ապակակերպ 38	Եղէրենի 35
Ապակամրղն 37	Եղէրիկ 35
Ապականման 38	Երկաթաձող 52
Ապակեղէն 38	
Ապակենի 38	Զէ՛ 41
Ապիկենի 37	Զօհալ 29
Առաջնաղի 31	
Արիւնեթութիւն 47	Հաահա 44
Արղնխա 26	Հաղիան 45
Աւելուլի 32	Հողիխոն 24
Աբու 25	Հոտաղբուսթ 22



Թան 48  
 Թանչախա 53  
 Թանչակալ 53  
 Թանչք 53  
 Թաշանաճ 44  
 Թափան 33  
 Թթախառութիւն 47  
 Թոսութարբբլ 48  
 Թոսութբ 47

Իպա 48  
 Իպանի 48  
 Իբբէնճէպին 41  
 Իդրիֆիլ 42  
 Իւսաիւբոս 24  
 Իւսաիւբսաթ 24

Լազիճ 29  
 Լակուա 44  
 Լէզլ 29  
 Լուսանցիկ 35

Խալիզոն 39  
 Խաղճախաղճու 41  
 Խաշոյ 48  
 Խեչգետանի 28  
 Խթաղի 33  
 Խինձ աղեաց 31  
 Խղունչ 39  
 Խոլլ 28  
 Խոսմար 45

Միածան 36

Կալկատար 52

Կարծրաթաղանթ 34  
 Կարծրամաշկ 34  
 Կարծրէնի 34  
 Կեղիկոն 39  
 Կղակաթափուլթիւն 44  
 Կողմատար 44  
 Կողոն 33  
 Կսուսիտա 28, 42, 49

Հայլ 29  
 Հաստաղի 33  
 Հուռոմ սամիթ 46

Ղանիոս 35  
 Ղարուբա 50  
 Ղուլինճ 28  
 Ղուլինիճ 47

Ճրագու սկան 34

Մալախուլիա 48  
 Մայասիլ 47  
 Մաշիմա 38  
 Մասպուխ 48  
 Մարաթրոն 47  
 Միլ 28  
 Մուլթաշիմա 34  
 Մոպուխ 48  
 Մրաթրուլթիւն 47  
 Մօհատարիլ 25

Ֆամրաղի 33  
 Ֆեանաղի 33  
 Ֆրղնիսա 26

Նախաղի 31  
 Նախիճ 31  
 Նբրիչ 27

Շակիկա 44  
 Շապաբա 37  
 Շորապա 48  
 Շորապէ 48  
 Շորուա 48  
 Շօրվա 48

Ռանագարուլթիւն 27  
 Ռանաուլթիւն 27  
 Ռանայաւ 27  
 Ռանայաւուլթիւն 27

Պանարի ջուր 45  
 Պատաւոր 40  
 Պատիեան 45  
 Պաւասի 25  
 Պզրգատուն 49  
 Պզրկատուն 28  
 Պոտաբիոս 27  
 Պուուկ 40  
 Պուուկ 40

Ջղաձգուլթիւն 44

Ռաղիան 45  
 Ռաղինէճ 45  
 Ռիլան 45  
 Ռեղէնէ 45

Սամիթ 45  
 Սայիմ 31

Սանորակ 38  
 Սարդոստէնի 37  
 Սիլ 50  
 Սինաղի 32  
 Սիպիբէ 38  
 Սիւֆուֆ 48  
 Սկզերոս 34  
 Սպիտակ լուսն 34  
 Սպիտակուց աչաց 34  
 Սունկ 47  
 Սուֆուֆ 48  
 Սուղուլթիւն 22  
 Սրատաժ 49  
 Սրբէնճէպին 41  
 Սրբնճուպի 28  
 Սթթա 44

Վատաղուլթիւն 52

Տաուն 28  
 Տանպուոսոյ 24  
 Տարապ 26  
 Տարր 23  
 Տէրպարէ 26  
 Տիւսթուոս 54  
 Տիւսանդէրիա 52

Բաղպամ 45

Յանցաթաղանթ 37  
 Յանցամաշկ 37  
 Յանցատեսակ 37  
 Յանցենի 37

Փաթոյթ 32

Փայտւանդ 40

Փէյկէկէնա 41


Փուշե 30

Քուսնճ 59

Քամոց 20

Ֆալեճ 44

---



30

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0070917

